Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11002/2025- ԵԱ1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան -1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 – 31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025 – 30.09.2025 |
| Ներկայացման օր | 07.10.2025 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 176 շահառուի Նոր Նորք, Ավան, Նուբարաշեն, Արաբկիր եւ Քանաքեռ- Զեյթուն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 29 դեպքի վարում (19 վերափաստագրում, 6 աջակցող պարագա, 2 շահառու ստացել է նոր անձնագիր, 1 հաշմանդամության կարգավիճակի փոփոխություն, 1 անվճար վիրահատության կազմակերպում): Եռամսյակի ընթացքում ՄՍԾՏԿ-ից ձեռք է բերվել թվով 4 շահառուների համար անապահովության միավորների տեղեկանք՝ բժշկական կենտրոններում անվճար հետազոտություններ անցնելու համար: Թվով 24 շահառուների համար կատարվել է գնումների և վճարումների իրականացում, սոցիալական աշխատողը թվով 51 շահառուի միջնորդել և ուղղորդել է թաղապետարան՝ աղքահանության վճարների արտոնություններից օգտվելու նպատակով: Թվով 6 շահառու ուղեկցվել է անձնագրային բաժանմունք՝ նոր անձնագիր ստանալու նպատակով, «ՎՏԲ» բանկ, բժշկական հաստատություն:

  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 37 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, 15 շահառու հետ իրականացվել է անհատական հոգեբանական խորհրդատվություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:

  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:

  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել են միջոցառումներ, համերգներ, էքսկուրսիաներ, որոնց մասնակցել են թվով 4 շահառու:

Կազմակերպվել է 3 շահառուի ծննդյան տարեդարձի նշում՝

1. Արաբկիր համայնքի տնային խնամքի ծառայություններ ստացող 2 շահառուների՝ ամուսիններ Ար000835 Ռազմիկ Համբարյանի և Ար001835 Հրանուշ Մարտիրոսյանի, ծննդյան 90-ամյակի կապակցությամբ Կազմակերպության աշխատակիցները սիրով շնորհավորել են և նվիրել հիգիենիկ փաթեթ:
2. Արաբկիր վարչական շրջանի տնային խնամքի ծառայություններ ստացող շահառու Ար030616 Ջուլիետտա Շիրինյանը ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Կազմակերպության աշխատակիցները սիրով շնորհավորել են շահառուին և նվիրել հիգիենիկ փաթեթ:
3. Արաբկիր վարչական շրջանի տնային խնամքի ծառայություններ ստացող շահառու Ար020623 Արաքսյա Դունամալյանի 75-ամյակի կապակցությամբ Կազմակերպության աշխատակիցները սիրով շնորհավորել են շահառուին և նվիրել հիգիենիկ փաթեթ:

Իրականացված միջոցառումներն են

- ✓ Համերգներ «Արամ Խաչատրյան» համերգասրահում
  - o Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ,
  - o Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ,
  - o Հայաստանի պետական կամերային նվագախումբ,
- ✓ Էքսկուրսիաներ
  - o Ապարան, Բաշ Ապարանի հերոսամարտի հուշահամալիր
  - o Նորավանք, Պարույր Սևակի տուն թանգարան

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 176 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 177 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը, բժշկական մասնագիտական խորհրդատվություն է տրամադրվել:
  Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 97 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 33 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ «Բեսթ լայֆ» ԲԿ, Իզմիրլյան Կենտրոն, 8-րդ հիվանդանոց, Արթմեդ ԲԿ, 1-ին հիվանդանոց, 11 պոլիկլինկա հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: Թվով 20 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, կատարվել է վերքի մշակում, վիրակապի փոխում (շարունակական), 37 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 19 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 1 շահառուի համար կատարվել է երակային ներարկում, 2 շահառու նոր են ընդգրվել տարածքը սպասարկող պոլիկլինիկա: Թվով 4 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 1 շահառու ուղեկցվել է Էրեբունի «Նորադենտ» ատամնաբուժարան,

կատարվել է ատամի հեռացում: 31 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնում դեղատոմսով, 28 շահառուի համար պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք: 15 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

- **Այլ ծառայություններ**

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Համապատասխան տարածքները սպասարկող սոցիալական աշխատողները մասնակցել են Երևանի բոլոր վարչական տարածքներում ՄԱԾՏԿ-ների խորհրդատվական նիստերին:
- ✓ Նոր Նորք եւ Ավան համայնքները սպասարկող թիմերի Սուպերվիզորը մասնակցել է
  - o առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն (ԱՔՀՀ) դասընթացին
    - ▪ Թեմա «Հաշմանդամություն և գործիքակազմ», Հուլիսի 15-16 2025թ: Դասախոս՝ Ջերոմ Բիքենբախ:
- ✓ Նոր Նորք համայքային կենտրոնի աշխատակիցները մասնակցել են դասընթացի
  - o Թեմա՝ «Սթրեսակայունություն» դասնթացավար՝ Ալբերտ Հովհաննիսյան
- ✓ Արաբկիր վարչական շրջանի տնային սպասարկան սոցիալական աշխատողը մասնակցել է ՄԱԾ խորհրդատվական նիստին:
- ✓ «Նոնենի» ՀԿ հոգեբանը սեփական նախաձեռնությամբ մասնակցել է «Երեւանի գեշտալտ ինստիտուտի» կողմից կազմակերպված 3 ժամ տեւողությամբ վերապատրաստման դասընթացի:

- ✓ «Նռնենի» ՀԿ հոգեբանը մասնակցել է հոգեկան առողջության հարցերով ընդլայնված քննարկման:
- ✓ «Նռնենի» ՀԿ հոգեբանը սեփական նախաձեռնությամբ մասնակցել է անհատական սուպերվիզիայի և հուզական այրման կանխարգելմանն ուղղված բալինտյան խմբային աշխատանքի (2 ժամ):

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 177/174 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 155 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 11 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 8 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 10 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 163 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ -172 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 176 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 176 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 176 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 7 |
| 6. | խորհրդատվական օգնություն /Իրավաբանի խորհրդատվություն/ | 30 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>հոգեբանական խորհրդատվություն | 37 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «07». 10 .2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)